

ԿԱՆՈՒՆ

ՄՈՆՏՐԵԱԼ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

2. Կիրակի Յիսնակի / ԹԻԻ 91

Dimanche, 30 décembre 2018

6ème Dimanche de l'Avent / NO. 91



Աստուածաշունչի Ընթերցումներ
Եբրայեցիներուն Նամակէն 7.11-25 /

Ղուկաս 19.11-28 /

Les lectures de la Bible d'aujourd'hui:

Hébreux : 7.11-25 | Luc 19:11-28 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԲԻԹ ՔՋՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ / Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN / Prêtre Paroissial

Office Matines à 9 :30 - Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին

La Sainte Messe à 10:30 - Ս. Պատարագ Ժամը 10:30-ին

Office de Requiem à Midi - Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին

Deacons/Acolytes

Choirmaster: Mr. Sarkis Barsemian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ԹՈՒՂԹ ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 7.11-25



11Ուրեմն, եթէ կատարելութիւնը Ղեւտացիներու քահանայութեամբ ըլլար, (քանի որ ժողովուրդը Օրէնքին տակ դրուեցաւ անոր ատենը,) ա՛լ ի՞նչ պէտք կար որ ուրի՛շ քահանայ մը ելլեր՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ, եւ չկոչուեր Ահարոնի կարգին համեմատ: **12**Արդարեւ՝ քահանայութեան փոփոխումով՝ հարկ էր որ փոփոխութիւն ըլլար նաեւ Օրէնքին: **13**Եւ իրաւ եղաւ, որովհետեւ ա՛ն՝ որուն մասին կ'ըսուին այս բաները, կը պատկանէր ուրի՛շ տոհմի, որմէ ո՛չ մէկը մօտեցած էր զոհասեղանին. **14**քանի որ յայտնի է թէ մեր Տէրը սերած է Յուդայի տոհմէն: Իսկ այդ տոհմին մասին Մովսէս ոչինչ ըսաւ՝ քահանայութեան վերաբերեալ: **15**Ասիկա ա՛լ աւելի յայտնի է, քանի որ Մելքիսեդեկի նմանութեամբ ուրի՛շ քահանայ մը կ'ելլէ, **16**որ եղած է ո՛չ թէ մարմնաւոր պատուերի մը Օրէնքին համաձայն, հապա՛ անքակտելի կեանքի մը զօրութեան համեմատ:

17Որովհետեւ կը վկայէ. «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ»:

18Արդարեւ նախկին պատուէրը կը ջնջուի իր տկարութեան ու անշահեկանութեան համար, **19**(որովհետեւ Օրէնքը ոչի՛նչ կատարեալ ըրաւ,) եւ անոր տեղ կը մտնէ լաւագոյն յոյս մը՝ որով կը մօտենանք Աստուծոյ: **20**Եւ քանի որ ասիկա չեղաւ առանց երդումի, (որովհետեւ անոնք քահանայ եղած են առանց երդումի,

21իսկ ասիկա՝ երդումով, անո՛ր միջոցով՝ որ ըսաւ իրեն. «Տէրը երդում ըրեր է ու պիտի չզոյջայ. “Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ”».)

22Յիսուս երաշխաւոր եղաւ լաւագոյն ուխտի մը:

23Ի՛րապէս շատ եղած են քահանաները, քանի որ մահը կ'արգիլէր որ անոնք միշտ մնան: **24**Բայց ասիկա ունի անփոփոխ քահանայութիւն, որովհետեւ յաւիտեան կը մնայ: **25**Ուստի կարող ալ է կատարելապէս փրկել անոնք՝ որ իրմով կու գան Աստուծոյ. որովհետեւ ինք միշտ կ'ապրի՝ անոնց բարեխօս ըլլալու համար:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 19.11-28

11Երբ անոնք կը լսէին այս բաները՝ առակ մըն ալ ըսաւ, քանի որ ինք Երուսաղէմի կը մօտենար եւ անոնք կը կարծէին թէ Աստուծոյ թագաւորութիւնը անմիջապէս պիտի երեւնար: **12**Ուրեմն ըսաւ. «Ազնուական մարդ մը գնաց հեռաւոր երկիր մը՝ իրեն թագաւորութիւն ստանալու եւ վերադառնալու: **13**Իր տասը ծառաները կանչելով՝ տասը մնաս տուաւ անոնց, ու ըսաւ անոնց. «Շահարկեցէ՛ք՝ մինչեւ որ գամ»: **14**Անոր քաղաքացիները կ'ատէին զայն, եւ պատուիրակութիւն մը դրկեցին անոր ետեւէն՝ ըսելով. «Չենք ուզեր որ ասիկա թագաւորէ մեր վրայ»: **15**Բայց երբ ան վերադարձաւ՝ թագաւորութիւնը ստանալով, իրեն կանչեց այն ծառաները՝ որոնց դրամ տուեր էր, որպէսզի գիտնայ թէ ո՛վ ի՛նչպէս շահագործած էր: **16**Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, քու մնասդ՝ տասը մնաս վաստկեցաւ»: **17**Ան ալ ըսաւ անոր. «Ապրի՛ս, բարի՛ ծառայ. որովհետեւ ամենափոքր բանին մէջ հաւատարիմ եղար, տա՛սը քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր»: **18**Երկրորդը եկաւ ու ըսաւ. «Տէ՛ր, քու մնասդ՝ հինգ մնաս բերաւ»: **19**Եւ ըսաւ անոր. «Դուն ալ հի՛նգ քաղաքի վրայ եղիր»: **20**Ուրիշ մը եկաւ ու ըսաւ. «Տէ՛ր, ահա՛ քու մնասդ՝ որ կը պահէի թաշկինակի մը մէջ ծրարած, **21**քանի որ կը վախնայի քեզմէ. որովհետեւ դուն խիստ մարդ մըն ես, կը վերցնես չորած բանդ, եւ կը հնձես չտերմանածդ»: **22**Ան ալ ըսաւ անոր. «Բերանո՛վդ պիտի դատեմ քեզ, չա՛ր ծառայ: Գիտէիր թէ ես խիստ մարդ մըն եմ, կը վերցնեմ չորած բանս ու կը հնձեմ չտերմանածս. **23**ուրեմն ինչո՞ւ չտուիր իմ դրամս սեղանաւորներուն, որպէսզի եկած ատենս՝ տոկոսո՛վ պահանջէի զայն»: **24**Քովը կայնողներուն ըսաւ. «Առէ՛ք ատկէ մնասը, եւ տուէ՛ք անոր՝ որ տասը մնաս ունի. **25**(Ըսին իրեն. "Տէ՛ր, ան տա՛սը մնաս ունի".) **26**որովհետեւ կը յայտարարեմ ձեզի թէ ամէն ունեցողի պիտի տրուի, ու չունեցողին՝ ունեցա՛ծն ալ պիտի առնուի իրմէ: **27**Բայց այդ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւորեմ, բերէ՛ք հոս եւ մեռցուցէ՛ք իմ առջեւ»»:

Hébreux 7.11-25

11Si donc la perfection s'était trouvée dans la sacrificature Lévitique, (car c'est sous elle que le peuple a reçu la Loi) quel besoin était-il après cela qu'un autre Sacrificateur se levât selon l'ordre de Melchisédec, et qui ne fût point dit selon l'ordre d'Aaron. **12**Or la Sacrificature étant changée, il est nécessaire qu'il y ait aussi un changement de Loi. **13**Car celui à l'égard duquel ces choses sont dites, appartient

à une autre Tribu, de laquelle nul n'a assisté à l'autel; **14**Car il est évident que notre Seigneur est descendu de la Tribu de Juda, à l'égard de laquelle Moïse n'a rien dit de la Sacrificature. **15**Et cela est encore plus incontestable, en ce qu'un autre Sacrificateur, à la ressemblance de Melchisédec, est suscité; **16**Qui n'a point été fait [Sacrificateur] selon la Loi du commandement charnel, mais selon la puissance de la vie impérissable.

17Car [Dieu] lui rend [ce] témoignage : tu es Sacrificateur éternellement, selon l'ordre de Melchisédec.

18Or il se fait une abolition du commandement qui a précédé, à cause de sa faiblesse, et parce qu'il ne pouvait point profiter. **19**Car la Loi n'a rien amené à la perfection; mais [ce qui a amené à la perfection], c'est ce qui a été introduit par-dessus, [savoir] une meilleure espérance, par laquelle nous approchons de Dieu.

20D'autant plus même que ce n'a point été sans serment. Or ceux-là ont été faits Sacrificateurs sans serment;

21Mais celui-ci l'a été avec serment, par celui qui lui a dit : le Seigneur l'a juré, et il ne s'en repentira point : tu es Sacrificateur éternellement selon l'ordre de Melchisédec.

22C'est [donc] d'une beaucoup plus excellente alliance [que la première], que Jésus a été fait le garant.

23Et quant aux Sacrificateurs, il en a été fait plusieurs, à cause que la mort les empêchait d'être perpétuels. **24** Mais celui-ci, parce qu'il demeure éternellement, il a une Sacrificature perpétuelle. **25**C'est pourquoi aussi il peut sauver pour toujours ceux qui s'approchent de Dieu par lui, étant toujours vivant pour intercéder pour eux.

Luc 19.11-28

11Et comme ils entendaient ces choses, Jésus poursuivit son discours, et proposa une parabole, parce qu'il était près de Jérusalem, et qu'ils pensaient qu'à l'instant le Règne de Dieu devait être manifesté. **12**Il dit donc : un homme noble s'en alla dans un pays éloigné, pour se mettre en possession d'un Royaume, mais dans la vue de revenir. **13**Et ayant appelé dix de ses serviteurs, il leur donna dix marcs d'argent et leur dit : Faites-les valoir jusqu'à ce que je vienne. **14**Or ses citoyens le haïssaient : c'est pourquoi ils envoyèrent après lui une députation, pour dire : nous ne voulons pas que celui-ci règne sur nous. **15**Il arriva donc après qu'il fut

retourné, et qu'il se fut mis en possession du Royaume, qu'il commanda qu'on lui appelât ces serviteurs à qui il avait confié [son] argent, afin qu'il sût combien chacun aurait gagné par son trafic. 16 Alors le premier vint, disant : Seigneur, ton marc a produit dix autres marcs. 17 Et il lui dit : cela va bien, bon serviteur; parce que tu as été fidèle en peu de chose, aie puissance sur dix villes. 18 Et un autre vint, disant : Seigneur, ton marc en a produit cinq autres. 19 Et il dit aussi à celui-ci : et toi, sois établi sur cinq villes. 20 Et un autre vint, disant : Seigneur, voici ton marc que j'ai tenu enveloppé dans un linge; 21 Car je t'ai craint, parce que tu es un homme sévère; tu prends ce que tu n'as point mis, et tu moissonnes ce que tu n'as point semé. 22 Et il lui dit : méchant serviteur, je te jugerai par ta propre parole : tu savais que je suis un homme sévère, prenant ce que je n'ai point mis, et moissonnant ce que je n'ai point semé; 23 Pourquoi donc n'as-tu pas mis mon argent à la banque, et à mon retour je l'eusse retiré avec l'intérêt? 24 Alors il dit à ceux qui étaient présents : Otez-lui le marc, et donnez-le à celui qui a les dix. 25 Et ils lui dirent : Seigneur, il a dix marcs. 26 Ainsi je vous dis, qu'à chacun qui aura, il sera donné; et à celui qui n'a rien, cela même qu'il a, lui sera ôté. 27 Au reste, amenez ici ces ennemis qui n'ont pas voulu que je régnaisse sur eux, et tuez-les devant moi.

28 Et ayant dit ces choses, il allait devant [eux], montant à Jérusalem.





Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ, Ամէն



Այսօր տարեվերջի պատարագ կը մատուցենք. այսօր՝ այս սուրբ եւ անմահ պատարագի ընթացքին, քննութեան առնելով կ'ամփոփենք մեր միտքերը, խօսքերն ու գործերը, մեր յարաբերութիւնները Աստուծոյ եւ մարդոց հետ: Մենք գիտենք, որ որուն ինչ ըրած եւ ըսած ենք՝ թէ՛ լաւ, թէ՛ վատ, թէ՛ բարի եւ թէ՛ չար, նոյնիսկ բան մը որ չենք ըրած, անտարբեր եղած ենք մեր նմաններու հոգեւորն եւ կարիքներուն նկատմամբ, իրենց պատասխանն ու վարձքը պիտի ստանան Տիրոջ կողմէն: Զանի որ «անտարբերութիւնը ութերորդ մահացու մեղքն է», - կ'ըսէ Գարեգին Ա կաթողիկոսը: Մենք այսօր մեր ուշադրութիւնը կը կեդրոնացնենք ողջ տարուան կտրուածքով մեր սեփական վարքագիծին եւ մեր մեղքերուն վրայ: Ահա թէ ինչով կը տարբերի քրիստոնեայ մարդկութիւնը ողջ աշխարհէն: Աշխարհը տարբեր բաները կ'արժանացնէ իր ուշադրութեան: Աշխարհի փնտռողները զանազան են, քրիստոնեաներունը՝ տարբեր: Աշխարհը սպանութիւններ կը գործէ յանուն խաղաղութեան: Այսօրուան մարդկութեան կը մատուցուի տարբեր բարոյահոգեբանական արժեհամակարգ, եւ մարդուն կը ստիպեն որդեգրել ուրիշ հոգեկերտուածք, քրիստոնեութենէն հեռու հոգեմտաւոր տարբեր գաղափարներ ու արժեքներ: Կը քարոզուի մարդկային ազատութիւնը, բայց զուգահեռաբար մարդը անգիտակցօրէն կը դառնայ քրիստոնեութեան օտար, տարբեր գաղափարախօսութիւններու ստրուկը: Բոլորը կը խօսին արդարութենէն, բայց փաստը այն է, որ պատերազմներ կը մղուին, որուն զոհը կը դառնան բազմաթիւ կիներ, ծերեր եւ անմեղ մանուկներ: Գիտութեան եւ արուեստագիտութեան զարգացումը, նպաստելով մարդկային կենցաղի բարելաւման, միաժամանակ նաեւ նորանոր չարիքներու սկիզբ կը դառնայ: Քրիստոնեան կանգնած է սեփական երեխային զանազան իրողութիւններէն հեռու պահելու դժուարագոյն խնդրին առջեւ: Մանուկը ինքն անզօր է տարբերակել «բնական երեւոյթի» տակ ներկայացող վտանգները: Հասարակական փոփոխութիւնները իրենց հետ փոխած եւ նոյնիսկ արժեզրկած են քրիստոնեական ընտանիքի դարաւոր տիպարը:

Քրիստոնեական ընտանիքի ըմբռնումները փոփոխող աշխարհին կողմէ այսօր կասկածի տակ կ'առնուին: Նոյնիսկ հաւատքը եւ հաւատքի կեանքը կը ծաղրուին: Նորագոյնին հասնելու եւ առաջնակարգ կենսակերպէն ետ չմնալու ձգտումները մարդկային հասարակութեան պատմութիւնը կ'ուղղորդեն դէպի անդունդը: Մարդը փոխանակ երկինք յառելու իր հայացքը, ախորժահամ երեւոյթներուն հետեւելով, կը կորսնցնէ իր արարչական պատկերը: Ան անտարբեր դարձած է ոչ միայն երկնային արքայութեան փնտռողներուն մէջ, այլ նաեւ երկրային կեանքի կենցաղավարութեան մէջ դարձած է անտարբեր, ագահ, բարոյական անարատութենէն զուրկ: Մինչդէռ իւրաքանչիւր անձ պարտաւոր է խորհելու իր երկրային առաքելութեան մասին: Աստուածաշունչը կ'ըսէ. «Բոլոր չարիքներուն արմատը արծաթասիրութիւնն է» (Ա Տիմոթէոս 6:10): Դեռեւս 1880-ական թուականներուն Աւետիս Ահարոնեանը կը պատմէ երկու եղբայրներուն մասին, որոնք հայրական տունէն առանձնանալով Նոյնիսկ սղոցով կը կիսեն մահճակալը: Մարդիկ զիրար կ'ոչնչացնեն՝ խլելով իրենց նմաններուն բարիքները: Մարդուն ագահութիւնը կը փակէ անոր խիղճին ձայնը, որուն միջոցաւ օժտած է զինք իր Արարիչը: Աշխարհը մարտահրաւերներ ունի մարդուն համար, եւ քրիստոնեան անընդհատ կանգնած է իր հաւատքին պաշտպանութեան խնդրին առջեւ, աստուածային պատուիրաններուն կատարման դժուարութեան առջեւ: Երբեմն Նոյնիսկ, կը թուի թէ, անհնար է ապրիլ այսօրուայ աշխարհին մէջ եւ կատարել Յիսուս Քրիստոսի պատուիրանները: Մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Այստեղ, աշխարհին մէջ նեղութիւն պիտի ունենաք, սակայն քաջալերուեցէ՛ք եւ յաղթեցի աշխարհին» (Յովհաննէս 16:33): Աստուած Սուրբ Գիրքով միշտ մեզի կ'ըսէ, թէ ինչպէս պէտք է ապրին Աստուծոյ արարածները: Սակայն մարդը շարունակաբար կ'ընթանայ մեղքի ճանապարհով, անոր վկայութիւնն են ջրհեղեղը, Սողոմ-Գոմոր քաղաքներուն կործանումը: Ասոնք կը ցուցանէն այն, որ Աստուած այլեւս չանդուրժեց մեղքի թագաւորութեան: Բայց Ան խոստացաւ այլեւս աշխարհը չկործանել, Իր Միածին Որդին ուղարկեց մարդկութեան փրկութեան համար, որպէսզի մարդը, յիշելով մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսին զոհաբերութիւնը, պատարագուիլը՝ ի քաւութիւն եւ ի փրկութիւն մեղաւոր մարդկութեան, հանապազ ձգտի նմանուիլ իր Տիրոջը եւ սէր, ներողամտութիւն եւ գթառատութիւն սերմանէ աշխարհին մէջ: Պօղոս առաքեալը կ'ըսէ. «Եւ ոչ մէկուն պարտապան մի՛ մնաք, բացի իրար սիրելէ, քանի որ ան որ կը սիրէ իր ընկերը, կը կատարէ օրէնքը: Մի՛ շնար, մի՛ սպաներ, մի՛ գողնար, սուտ մի՛ վկայեր, մի՛ ցանկար եւ ուրիշ ինչ պատուիրան որ կայ, այս խօսքին մէջ կը բովանդակուի, թէ՛ սիրէ՛ քու ընկերդ ինչպէս քու անձդ, սերը իր ընկերոջը չար բան մը չ'ըներ, սերն է օրէնքին լրացումը» (Հռոմեացիներ 13:8-10): Եկէք այսօր սուրբ պատարագի ընթացքին աղօթք բարձրացնենք մարդկային փորձութիւններուն համար, որոնց առջեւ կանգնած է մարդկութիւնը: Աղօթք բարձրացնենք առ Աստուած, որպէսզի Տէրը հեռու պահէ մեզի եւ մեր ընտանիքները չարին որոգայթներէն: Մենք պէտք է փայլինք իբրեւ Քրիստոսի լոյսը կրողներ, քանի որ Ինք Տէրը կ'ըսէ. «Եւ

ճրագ վառելով կաթսային տակ չեն դներ, այլ՝ աշտանակին վրայ, եւ ան լոյս կու տայ բոլոր անոնց, որ տան մէջ են: Թող այդպէս փայլի ձեր լոյսը մարդոց առջեւ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքն է» (Մատթէոս 5:15,16): Աղօթենք մեզի, մեր հարազատներուն, մտերիմներուն ու հայրենակիցներուն համար, որպէսզի չարին թակարդը չիյնանք եւ հաւատարիմ մնանք մեր Աստուծոյ, պատուիրանապահութեան մէջ, չընկրկինք եւ չնահանջենք մեր քրիստոնէական սկզբունքներէն: Չկորսնցնենք յաւիտենական թագաւորութեան տեսլականը, իբրեւ Չինուորեալ եկեղեցի՝ առաջնորդուինք Յաղթանակած եկեղեցին ներկայացնող սուրբերուն բարեխօսութեամբ: Աղօթենք Աստուծոյ, որպէսզի սուրբ ծննդեան պահեցողութեամբ առաջնորդէ մեզ դէպի Յիսուս Մանուկը, որպէսզի կարենանք ընդունիլ Աստուծոյ մեր սիրտերուն եւ հոգիներուն մէջ: Գարեգին Ա կաթողիկոսը կ'ըսէ. «Մարդուն երջանկութեան ճանապարհը կը սկսի ապաշխարութեան մեկնակէտէն»: Մաքրենք մեր սիրտերը Տիրոջը հոն ընդունելու համար: Աղօթական կեանքով նախապատրաստուինք մեր Տիրոջ եւ Փրկիչին գալստեան: Անկախ այն բանէն, թէ աշխարհը ինչ կ'ընէ, մենք մոգերուն պէս հետեւինք աստղին եւ երթանք փնտռելու, գտնելու եւ երկրպագելու Աստուծոյ: Սիմէոն ծերունիին եւ Աննա մարգարէուհիին պէս խնդրենք Աստուծամէ, որ կեանքը չաւարտենք՝ առանց Տիրոջ ճանչնալու, Չաքէոս մաքսապետին նման ջանք չինայենք Աստուծոյ Որդին տեսնելու համար, փոխենք մեր կեանքը բարիք ընելով եւ ըրած չարիքը փոխհատուցելով, աշակերտներուն պէս անձնուիրաբար եւ անմնացորդ հետեւինք Ճշմարիտ Վարդապետին, հարիւրապետին պէս հիացնենք Յիսուս Բրիստոսին մեր հաւատքով, Յովհաննէս առաքեալին նման մինչեւ վերջին պահը հաւատարիմ մնանք եւ չլքենք Աստուծոյ, քանի որ մեզի հետ է Տիրոջ օգնութիւնը. «Եւ ահա ես ձեզի հետ եմ բոլոր օրերուն մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթէոս 28:20): Շնորհք, սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանս. Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան

Հոգեւոր հովիւ


Résumé du Sermon

Une année se termine et il est temps des bilans, des évaluations, des rires et des larmes.

Nous avons plus de moyens de vivres que nos ancêtres mais aujourd'hui la raison de vivre nous manque.

Au cours de l'année nous avons augmenté nos péchés et peut-être nos biens matériels mais nous sommes sur terre pour la relation, l'amitié et la fraternité pour une vie définie sur un chemin que Notre Seigneur nous a ouvert. Pauvreté, guerres, maladies nous entourent et à cela s'ajoute la détresse d'être chrétien pour rester fidèles aux Évangiles, le combat contre l'indifférence à la Parole de Dieu et le constat des persécutions, morales et physiques, de nos sœurs et frères un peu partout dans le monde. Prions le Seigneur pour qu'Il nous guide vers le Bien, Ouvrons nos cœurs pour recevoir Jésus car en observant tout ce qu'Il a prescrit Il sera avec nous jusqu'à la fin du monde.

**En Foi et en Prière
Père David Margaryan
Prêtre paroissial**



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ՀԱԲԱՏՔՈՎ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ



(Քրիստոսի հաւատացող իւրաքանչիւր անձի աղօթք)

7. Ամենատես Աստուած, մեղանչեցի քեզի դէմ՝ մտածումով, խօսքով եւ գործով. ջնջէ՛ իմ յանցանքներու մուրհակը, եւ կեանքի Գիրքին մէջ գրէ անունս. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:
8. Գաղտնիքները քննող Աստուած, մեղք գործեցի քեզի դէմ՝ կամայ եւ ակամայ, գիտակցաբար եւ անգիտակցաբար. թողութիւն շնորհէ մեղաւորիս, որովհետեւ սուրբ Աւագանէն ծնելէս մինչեւ այսօր մեղք գործած եմ քու Աստուածութեանդ առջեւ՝ զգայարանքներովս եւ մարմնիս բոլոր անդամներով. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:
9. Բոլորը ինամող Տէր, քու սուրբ երկիւղդ պահապան դիր աչքերուս՝ որ այլեւս անառակ ու ցանկացող աչքով չնայիմ, եւ ականջներուս՝ որ ախորժ չզգամ չար խօսքեր լսելէ, եւ բերանիս՝ որ ստուրթիւն չխօսիմ, եւ սրտիս՝ որ չարութիւն չխորհիմ, եւ ձեռքերուս՝ որ անիրաւութիւն չգործեմ, եւ ոտքերուս՝ որ անօրէնութեան ճամբաներէն չքալեմ. Այլ ուղղէ ասոնց շարժումը, որպէս զի միշտ քու պատուիրաններունդ համաձայն ըլլան՝ ամէն բանի մէջ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:

Ս. Ներսէս Շնորհալի

(Շարունակելի)





JE CONFESSE AVEC FOI



7. Toi qui vois tout, j'ai péché contre Toi par pensée, par parole et par action; annule la sentence de mes fautes et inscris mon nom dans la Livre de Vie. Aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur!

8. Toi qui scrutes les secrets, j'ai péché contre Toi, volontairement et involontairement, sciemment et par ignorance, accorde le pardon au pécheur que je suis : car, depuis ma naissance à la fontaine sacrée jusqu'à aujourd'hui, j'ai péché devant ta Divinité, par mes sens et par tous les membres de mon corps. Aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur!

9. Seigneur, Toi qui es plein de sollicitude, établis et sentinelle, devant mes yeux, ta sainte crainte : que je ne regarde plus ce qui est impur; établis-la devant mes oreilles : que je ne prenne pas de plaisir aux méchants propos; et devant ma bouche : que je ne profère pas de mensonges; et devant mon cœur : que je ne songe pas à faire le mal; et devant mes mains : que je ne commette pas l'injustice; et devant mes pieds : que je ne marche pas sur les routes d'iniquités; mais rectifie leurs activités : que tout en moi se conforme à tes commandements. Aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur!

Saint Nersès Snorhali

(Le Gracieux)

(à suivre)





ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ


Եթե Աստուծոյ չես հանդիպած երկրի
վրայ, ապա Անոր չես տեսներ Նաեւ
տիեզերքին մէջ:

Եւրի Կակարին



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 30 Դեկտեմբեր 2018



Տիկ. Էլտա Էրտողմուշի,
Պրն. Ջերման Էրտողմուշի,
Տ. եւ Տիկ. Այգ եւ Ռինա Պաղտասարեանի,
Տ. եւ Տիկ. Արթին եւ Ալեքսա Սարգիսեանի,
Օրդ. Անիա Պաղտասարեանի եւ Պրն. Վարդան Սուվալեանի,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ
ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԲԱԲԵԼ ԷՐՏՈՂՍՈՒՇԻ

(PAPEL ERDOGMUS)

Մահուան 40-ին առիթով





Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան
Calendrier des Fêtes pour la Semaine Prochaine

Դեկտեմբեր – Décembre 2018

31, Երկուշաբթի – Բ. օր Ծննդեան պահոց:

Lundi 31 – 2ème jour du jeûne de Noel
Յոկոմար / Janvier 2019

1, Երեքշաբթի – ԱՄԱՆՈՐ ԵՒ ՆՈՒՌՈՐՅՆԷՔ –



Գ. օր Ծննդեան պահոց:

Ս. Պատարագ – առաւօտեան ժամը 11-ին

Յաւարտ Ս. Պատարագի ՆՈՒՌՈՐՅՆԷՔԻ արարողութիւն եւ բաշխում

Mardi 1 – Messe de Nouvel An - 3ème jour du jeûne de la Nativité
Bénédiction et distribution des grenades

à la fin de la Messe

2, Չորեքշաբթի – Դ. օր Ծննդեան պահոց:

Mercredi 2 - 4ème jour du jeûne de la Nativité

3, Հինգշաբթի – Ե. օր Ծննդեան պահոց:

Jeudi 3 – 5ème jour du jeûne de la Nativité

4, Ուրբաթ – Զ. օր Ծննդեան պահոց:

Vendredi 4 - 6ème jour du jeûne de la Nativité

5, Շաբաթ – Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան

Տեան Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Երեկոյեան ժամերգութիւն – ժամը 5:30-ին

Ճրագալոյցի Ս. Պատարագ- ժամը 6:00-ին

Samedi 5 – Vigile de la Nativité et de la Théophanie
De N.S. Jésus-Christ

Շաբաթ, Դեկտեմբեր 29, 2018

Բարեկենդան Սուրբ Ծննդեան պահոց

Սուրբ Ծննդեան պահքի Բարեկենդանը անփոփոխ կը նշուի Դեկտեմբեր 29-ին, այսինքն՝ Սուրբ Ծնունդէն 7 օր առաջ: Սուրբ Ծննդեան պահքը իր մէջ կ'ընդգրկէ նաեւ Նոր Տարուայ տօները մինչեւ Յունուար 5-ը՝ Ս.Ծննդեան ճրագալոյցը:



Շաբաթ, Դեկտեմբեր 29, 2018

Ս. Ծննդեան պահք

Ս. Ծննդեան նախորդող մէկ շաբաթը պահոց շրջան է:

Դեկտեմբեր 29-ի երեկոյէն մինչեւ Յունուար 5-ի երեկոյ մարդիկ պահք կը պահեն: Այդ ընթացքին կ'օգտագործուի բացառապէս բուսական ծագում ունեցող սնունդ:

Պահեցողները պահքի շրջանէն դուրս կու գան Յունուար 5-ի երեկոյեան, երբ եկեղեցւոյ մէջ կը մատուցուի Ս. Ծննդեան ճրագալոյցի Պատարագ եւ կը տրուի Ս. Ծննդեան Աւետիսը:

Մարդիկ զիրար կ'ողջունեն «Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ, Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»:





ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայոց Եկեղեցւոյ Սուրբ Ծնունդի տօնակատարութիւնը սուրբ տօնը նշելու հնագոյն ավանդոյթները կը կրէ իր մէջ: Նախ, ի տարբերութիւն աշխարհի քրիստոնեաներու մեծամասնութեան, որոնք Ս. Ծնունդը կը նշեն հին կամ նոր տոմարով Դեկտեմբեր 25-ին, Հայ Եկեղեցին միշտ տօնախմբած է Յունուար 6-ին, որ հիմնուած է Ա. դարուն Ս. Յակոբոս



Տեառնեղբօր հրահանգին վրայ: Ժամանակին այսպէս կը տօնէ-ին բոլոր եկեղեցիները: Մեր Եկեղեցւոյ մէջ պահպանուած է հնագոյն ավանդութիւն մը եւս, Ս. Ծնունդի հետ կը նշենք նաեւ Քրիստոսի Մկրտութիւնը եւ Աստուածայայտնութիւնը: Դուկաս Աւետարանիչ մեզի կը պատմէ, որ երբ Յիսուս մկրտուեցաւ, 30 տարեկան էր, Սուրբ Աւանդութիւնն ալ կը մանրամասնէ, որ Տէրը մկրտուեցաւ ճիշդ իր ծնունդին օրը՝ Յունուար 6-ին, ցոյց տալու համար որ մկրտութիւնն ալ ծնունդ մըն է, հոգեւոր ծնունդ, եւ անոնք որոնք Քրիստոսի օրինակին պիտի հետեւին եւ մկրտուին՝ վերստին պիտի ծնին Ս. Հոգիէն եւ ջուրէն: Երբ Յիսուս մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ, երկինքը բացուեցաւ եւ Ս. Հոգին աղանիկ կերպարանքով իջաւ Յիսուսի վրայ, ապա երկինքէն լսուեցաւ Հայր Աստուծոյ ձայնը, որ կ'ըսէր, թէ Յիսուս Աստուծոյ Որդին է: Աստուածաշունչի այս դրուագը այն քիչ դէպքերէն է, ուր մեր առջեւ կը բացայայտուի Սուրբ Երրորդութիւնը՝ Հայր Աստուած երկինքէն կը խօսի, Որդի Աստուած կը մկրտուի եւ Սուրբ Հոգի Աստուած աղանիկ կերպարանքով կ'իջնէ երկինքէն: Այս երանելի դրուագը պատկերելու համար է, որ Սուրբ Ծնունդի պատարագի ավարտին մեր եկեղեցւոյ մէջ կը կատարենք հնագոյն ավանդութիւններէն մէկը՝ ջրօրհնէքի արարողութիւնը՝ Քրիստոսը խորհրդանշող խաչով, Սուրբ Հոգիի զօրութիւն Սուրբ Միւռնոսով եւ օրհնաբեր երգեցողութեամբ:

PARTICULARITÉS DE LA SAINTE NATIVITÉ CHEZ LES ARMÉNIENS



Les rites de l'église arménienne en général, et de la célébration de la Sainte Nativité en particulier, ont conservé une des traditions les plus anciennes. Tout d'abord, à la différence de la majorité des chrétiens dans le monde, qui fêtent Noël le 25 décembre, selon l'ancien ou le nouveau calendrier, l'église arménienne a toujours fêté Noël le 6 janvier, date fondée sous l'apostolat de Saint Jacques frère du Seigneur. C'est ce jour-là que la Sainte Nativité était célébrée par toutes les églises à l'origine. Une des autres traditions les plus anciennes qui est conservée par notre église, est la suivante : en même temps que la Nativité, nous fêtons aussi, le même jour, le Baptême et la Révélation du Christ. L'évangéliste Luc nous raconte que Jésus avait 30 ans lorsqu'il fut baptisé ; la Sainte Tradition détaille que Jésus fut baptisé à la même date que sa naissance, le 6 janvier, afin de montrer que le Baptême est une nouvelle naissance, spirituelle, et que ceux qui vont suivre l'exemple du Christ et vont se faire baptiser, renaîtront du Saint Esprit et de l'eau. Lorsque Jésus fut baptisé dans le fleuve Jourdain, l'évangile raconte que le ciel s'ouvrit et que le Saint Esprit descendit sous la forme d'une colombe sur Jésus, et que du ciel retentit la voix de Dieu le Père, qui disait que Jésus est son fils. Ce passage de la Bible raconte l'un des rares épisodes où nous est révélé le mystère de la Sainte Trinité : Dieu le Père parle du haut des cieux, Dieu le fils se fait baptiser et Dieu le Saint Esprit descend du ciel sous la forme d'une colombe. C'est pour représenter cet épisode bienheureux qu'à la fin de la messe de Noël, dans notre église, une des traditions les plus anciennes est la bénédiction de l'eau, et ceci à l'aide de la Croix symbolisant le Christ, du Saint Muron (St Chrême) représentant la force de l'Esprit Saint, le tout accompagné de chants mélodieux apportant la bénédiction.





Holidays

Saturday, December 29, 2018

Eve of the Fast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ (Fast of Christmas)

Eve of the Fast of Christmas is always celebrated on December 29, that is - 7 days before the Feast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ (Christmas) and is ended on January 5, the eve of the feast.



Saturday, December 29, 2018


Commemoration of the Apostle St. James and Evangelist St. John

St. James was the son of the fisherman Zebedee, the senior brother of the Evangelist St. John. He was one of the closest and most reliable disciples of Jesus and the witness of the important events related to Jesus.

When Samaritans refused to receive Christ James and his brother asked Jesus to send fire down on the people as prophet Elijah did. Jesus reproached them for their groundless behavior. Because of such events Jesus called them "Boanerges, that is, sons of thunder" (See Mk 3:17). James is the only apostle about whose death is told in the "Acts of the Apostles". Herod arrested James and stabbed him.

The name of this apostle is closely related to the Armenian Patriarchate of Jerusalem. According to the tradition the head of the St. James was brought to James, brother of Jesus, who buried it in the garden of his house. Later the Cathedral of St. James was built in that same place, and in the chapel opened in the northern wall the tomb of the apostle's head is shown.

Evangelist St. John is the author of the fourth Gospel, three letters and the Revelation. He deserved the title of the "beloved disciple" of Christ. Jesus loved and trusted him so much that at the moment of crucifixion asked him to take care of the Holy Mother of God. He passed away in 100 AD, in Ephesus, at the age of 95.





**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
ՇՆՈՐՀԱԻՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ**

ԱՄԱՆՈՐ - ՆՈՐՅՆԷԸ

Երեքշաբթի, 1 Յունուար 2019, առաւօտեան ժամը 11:00-ին
Սուրբ Եւ Անմահ Պատարագ
Պատարագիչ Եւ քարոզիչ՝ - ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ԵՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Յաւարտ Ս. Պատարագի- **ՆՈՐՅՆԷԸԻ արարողութիւն Եւ բաշխում**



ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ - Շաբաթ, 5 Յունուար 2019

Սկիզբ ժամերգութեան - երեկոյեան ժամը 5:30-ին
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ - երեկոյեան ժամը 6:00-ին
ԱՍՏՈՒԾԱԾՆՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ - երեկոյեան ժամը 6:30-ին

Ս. Գրային հատուածներ կ'ընթերցեն

Յ.Բ.Ը.Մ.-ի ԱՐՄԵՆ ԶԵՊԷՔ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ աշակերտները
Պատարագիչ՝ - ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ԵՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ



ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻԱՏՈՍԻ
ՀԱՆԴԻՍԱԻՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՋՐՕՐՅՆԷՔ
Կիրակի, 6 Յունուար 2019

Սկիզբ ժամերգութեան - առաւօտեան ժամը 9:30-ին
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ – ժամը 10:30-ին

Պիտի պատարագէ Եւ յաւուր պատշաճի քարոզէ՝
Գանատահայոց Թեմի Առաջնորդ

ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈԿԱԿԻՄԵԱՆ

Յաւարտ Ս. Պատարագի՝ Ջրօրհնէքի Արարողութիւն
Կնքահայրութեամբ՝ Տիար **ԳՐԻԳՈՐ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ**
Յաւարտ Ս. Պատարագի ՏՕՆԱԿԱՆ ՃԱԾԿԵՐՈՅԹ «Մարի Մանուկեան» սրահին մէջ
Մուտքի նուեր՝ 25



ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Հոգեհանգստեան Արարողութիւն - Երկուշաբթի, 7 Յունուար 2019, առաւօտեան
ժամը 11:00-ին



ՏՆՕՐՅՆԷՔ

Ս. Ծննդեան տօնին առիթով Տնօրհնէք փափաքող հաւատացեալներէն կը խնդրենք
հեռաձայնել գրասենեակ՝ (514) 279-3066





Cathédrale Arménienne St Grégoire l'Illuminateur

Bonne Année et Joyeux Noël

Calendrier de la période des Fêtes

Mardi le 1er janvier 2019 : Messe de Nouvel An

Célébrant

le R.P. David Margaryan

qui prononcera l'homélie

Bénédictioin et distribution des grenades

à la fin de la Messe



Samedi le 5 janvier: Vigile de la Nativité et de la

Théophanie de N.S. Jésus Christ

Début des Célébrations à 17h 30 - Messe à 18 heures

Lectures Bibliques à 18h30 par les élevés École d'Armen Québec de l'U.G.A.B.

Célébrant - **le R.P. David Margaryan**, Prêtre de la Paroisse
qui prononcera l'homélie



Dimanche le 6 janvier : Noël et Épiphanie

Début des Célébrations à 9h30

Messe solennelle à 10h30 - La Messe sera célèbre par

S.E. Mgr Abgar Hovakimyan

Primat du Diocèse Arménien du Canada qui prononcera l'homélie

Bénédictioin de l'eau, sous le parrainage de Me KRIKOR DIKRANIAN

à la fin de la Messe.

Après les Cérémonies un repas de Noël Arménien dans

la salle " Marie Manoogian " Prix de participation \$25



Lundi le 7 janvier ; Messe à 11 heures, Office de requiem
pour tous les défunts



Bénédictioin des foyers à l'occasion de Noël prière d'appeler
le secrétariat de l'Église (514) 279-3066





Website:

www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,

Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ

Կայքէջը - Website www.saintgregory.ca

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:



Chers Paroissiens,

Nous avons le plaisir de vous informer de la récente mise à jour de notre

Site: www.saintgregory.ca

Ou vous trouvez les dernières nouvelles des activités et des événements.

Nous remercions de votre soutien!



Dear Parishioners,

We are glad to inform you our Church's newly developed

Website: www.saintgregory.ca

where you will read the latest church news and events, meanwhile you can also make your online church donations and benefiting from other possibilities of our Website.

Thank you for your support!



Ուշադրութիւն Մեր Սիրելի Չաւատացեալներուն



Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ճիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

Parish Council



Նախաձեռնությամբ՝
 Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ
 Լավալի Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցույ
 Թեքեան Մշակութային Միութեան



In collaboration with
 St. Gregory the Illuminator Armenian Cathedral
 Holy Cross Armenian Church
 Tekeyan Cultural Association

NEW YEAR'S EVE EXTRAVAGANZA

2019

Featuring Nerses Adourian
 & 5 member band
 DJ Hovsep



December 31st

SOLD OUT!

Children ages 6 and under - free

For reservations, please contact:

St Gregory the Illuminator (514) 279 3066
 Tekeyan Cultural Association (514) 747 6680

Holy Cross Church (450) 687 5355
 Centre Arménie (438) 826 2364



ՆՈՐՅՆԷՔ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

2019 թռւականի Երեքշաբթի,
Յոկոկար 1-ին
առաւօտեան ժամը 11:00-ին

Ամանորեայ Սուրբ եւ Անմահ Պատարագ

Պատարագիչ եւ քարոզիչ`

Արժ. Տէր Դաւիթ քհնյ. Մարգարեան

Յաւարտ Սուրբ Պատարագի տեղի պիտի ունենայ

(13:00-ին) Նօրհնէքի արարողութիւն եւ բաշխուի մեր հայազն
հաւատացելոց

Բոլորդ սիրով կը հրաւիրենք աղօթակից ըլլալու 2019-ի անդրանիկ

Պատարագին եւ մասնակից` Նօրհնեաց բացառիկ կարգին:

Բոլորիդ ներկայութիւնը եւ աղօթքը ցանկալի են:

ՇՆՈՐՀԱԻՐ ԱՄԱՆՈՐ ԵՒ ԳԱԼԷ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Հոգեւոր հովիւ եւ Ծխական խորհուրդ

Cathédrale Arménienne St. Grégoire l'Illuminateur

La bénédiction des Grenades

Première Messe de l'An,

Mardi, 1er janvier 2019 à 11 heures

Celebration er homélie par

le Rév. Père David Margaryan

Par la suite, la cérémonie de la bénédiction des Grenades et la
distribution aux fidèles aura lieu à 13 heures

Vous êtes cordialement invités à participer à ces célébrations pour
augurer un nouvel an de paix et de prospérité.

Votre présence et vos prières sont sollicitées.

Le prêtre et le Conseil paroissial



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐԵԿԵՂԵՑԻ

**Cathédrale Arménienne St-Grégoire
l'Illuminateur**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 /
stgregorychurch@gmail.com

**ՏՈՆ ԾՆԱՂԵԱՆ ԵՒ
Աստուածայայտնութեան
Տեառն Մերոյ Յիսուսի Զրիստոսի**

**Fête de la Naissance et
de la Théophanie de Notre
Seigneur Jésus Christ**



**Հանդիսաւոր Ս. Պատարագ եւ Ջրօրհնէք
Կիրակի, 6 Յունուար 2019**

Սկիզբ ժամերգութեան – առաւօտեան ժամը 9:30-ին
Սուրբ Պատարագ – առաւօտեան ժամը 10:30-ին

Liturgie à 9h30 et la Sainte Messe à 10h30

Dimanche le 6 janvier 2019

Պատարագիչ եւ Զարոզիչ՝
ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Առաջնորդ, Գանատահայոց Թեմի

**Messe célébrée par
S.E. Mgr. Abgar Hovakimyan**
Primat de l'Église Apostolique arménienne du Canada

Յաւարտ Ս. Պատարագի Ջրօրհնէքի Արարողութիւն

Կնքահայրութեամբ՝ Տիար Գրիգոր Տիգրանեանի
Ensuite aura lieu la bénédiction de l'eau
avec le parrainage de M. Krikor Dikranian

**Յաւարտ Ս. Պատարագի Տօնական ճոխ Ծաշկերոյթ
համադամ աղանդերներով «Մարի Մանուկեան» սրահին մէջ
Տիկնանց Յանձնախումբի պատրաստութեամբ**

**Un repas festif, organise par les Dames auxiliaires
de l'Église, aura lieu suite aux célébrations dans la salle
"Marie Manoogian"**

Մուտքի փոխ՝ 25 /Prix de participation \$ 25.00

Հոգևոր Հովիւ եւ
Միակն խորհուրդ /
Prêtre Paroissial et conseil
paroissial



ՀՐԱԷՐ



Գանատահայոց Թեմիս Առաջնորդ՝
Գերաշնորհ Տեր Աբգար եպիսկոպոս Յովակիմեանի
օրհնութեամբ կը կազմակերպուի
ԵՐԿՐՈՐԴ ԶԱՆԴԻՊՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԶԵՏ

Կիրակի, 13 Յունուար 2019, կեսօրէ ետք ժամը 1:30-ին

- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցւոյ Զոգեւոր հովիւ
Արժ. Տեր Դաւիթ քիւյ. Մարգարեանին
երիտասարդութեան հետ:

- Զիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:

Սիրով կը սպասենք մեր խոստումնալից երիտասարդները
ճանչնալու եւ քննարկելու մօտ ապագայի
ծրագիրները:

Զոգեւոր հովիւ

INVITATION

Avec la bénédiction de

S.E. Mgr Abgar Hovakimyan

Primat de l'Église Apostolique Arménienne du Canada

Dimanche, le 13 janvier 2019 à 1h30

Après la messe

Une 2ème réunion est organisée par
le Rév. Père David Margaryan afin d'explorer les attentes
mutuelles de la jeunesse et de l'Église.

Au plaisir de voir une participation imposante
de nos jeunes arméniens.

Le Prêtre Paroissial de
l'Église St. Grégoire l'Illuminateur de Montréal.



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
Ս. Սարգիս Զորավար
Երիտասարդներու
Օրհնութեան Օր**



Օրհնութեամբ՝

Բարձրաշնորհ

Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Սուրբ Եւ Ամմահ Պատարագ

Կիրակի, 17 Փետրուար 2019-ին

**Սկիզբ ժամերգութեան – առաւօտեան ժամը 9:30ին
Սուրբ Պատարագ – առաւօտեան ժամը 10:30-ին
Երիտասարդներու Օրհնութիւն – ժամը 12:30-ին**

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

**Յաւարտ Ս. Պատարագի Հիւրասիրութիւն
«Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ եւ հանդիպում
Երիտասարդներու հետ:**

Բոլորիդ ներկայութիւնը եւ աղօթքը ցանկալի են:

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/



stgregorychurch@gmail.com

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

www.saintgregory.ca



Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի
կ'ունենան

Կիրակի օրերը կեսօրէ ետք, ժամը 1-ին:

Les pratiques de la chorale des Jeunes ont lieu
Les dimanches à 13:00 heures

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու
հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի
մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront
l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le
solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի
բաղկանայ ժամանակակից, դասական եւ
կրօնական երաժշտական կտորներէ,
Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales
contemporaines, classiques et religieuses, de langue française et
arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

École de dimanche Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան



École de dimanche
Pour les enfants de 6 à 14 ans
Dans une ambiance chaleureuse et amicale on
Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- Connaissance de la langue arménienne
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

Chaque dimanche à 11 heures

Pour plus amples informations et inscription
Contacter le secrétariat de l'Église (514) 279-3066
Père David Margaryan

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ

Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ

Études bibliques et discussions
avec le R.P David Margaryan

Տեղի կ'ունենայ ամեն Հինգշաբթի
երեկոյեան՝ ժամը 7:00-ին Եկեղեցւոյ մէջ:

Les jeudis soirs à compter de 19 heures

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու

Տ. Դաւիթ Բինյ. Մարգարեանի՝
Ներկայացուցած

Աստուածաշնչական նիւթերուն:

Nous invitons nos chers fidèles à participer
à ces séances d'interprétations bibliques.

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

Une collation de café et de thé est servie.

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
Ներկայութիւնը:

Nous comptons sur votre
participation massive.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:

(514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Յայտարարութիւն

Սիրելի հաւատացեալներ,

Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու

Ճիական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին երեքշաբթի օրը,

երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական հանդիպում մը ունենալու

Ճիական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

**Շնորհակալութեամբ՝
Ճիական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ**